

թէ դիտաւորութեանը, այլ օրէնսդրութեանը Սրբազան Ժողովին: Սակայն նորին Սրբութիւնը իր յատուկ բարեացակամութեամբը սիրով օգնեց Եպիսկոպոսին, եւ հոգաց Քեղի սոկեհիւս շուրջառ մը զրկել իր միջոցաւ, ինչ որ պիտի նկատես իբրեւ նշան մը Քահանայապետական Բարութեան Քեղի հանդէպ: Հուսկ Տէրութեանդ համար երկար եւ անվտանգ կեանք կը հայցեմ Ամենակարող Աստուծո՛վ է:»

Վերը ընդդէմէն այն խիստ նշանակալից տողերը որոնք ցոյց կուտան որ Յակոբ Զուղայեցի անձամբ կամ իր եպիսկոպոսներով հաւատափոխ չէ եղած եւ հետո էր Հոռոմէադաւան ըլլալէ:

Կարգինալ Պարպէրինիի նամակին անվայել «քու եւ քեզի» ով ոճը բնական է աններելի է եւ այսպէսն էլ:

Յովհաննէս Արքեպիսկոպոս որ Յակոբ Զուղայեցիի նամակները եղած է, խստիւ ապսպրուած էր որ նամակը միայն եւ միայն Պապին ձեռքը յանձնէ: Ասոր պատճառը պարզ է: Յակոբ Զուղայեցի վերջին յուսահատ փորձ մը կ'ընէր դիմելով ուղղակի Պապին, այսպէս յուսալով որ մի գուցէ Հաւատոյ Տարածման Ժողովը շրջադայելով, Պապին դիմելով կրնար իր արդար դիմումին գոհացում մը տալ: Լեհահայերը նախապէս Հոռոմէադաւաններ չէին եւ իրենց իրաւունքն էր գինիին մէջ ջուր չխառնել Պատարազի ատեն իբր Հայադաւաններ, որով արդարանալի չէ Պապին եւ Հաւատոյ Տարածման Ժողովին մերժումը Լեհահայոց վերադարձնել իրենց բռնագրաւեալ կրօնական անկախութիւնը: Պապը շուրջառ մը կը զրկէր ամբողջ Լեհահայ Ժողովուրդին կողոպտուած աւանդական եւ նիւթական հարստութեան փոխարէն:

Հաւատոյ Տարածման Ժողովին դիւաններուն մէջ կան քանի մը նամակներ Բարսեղ վարդապետ Արզուրումցիի մասին, որ Հոռոմէադաւան ըլլալով դործունէութիւն ունեցած է Թարսիզի եւ այլ հայկական համայնքներու մէջ: Յակոբ Զուղայեցի ջանացած է այս քարոզիչին դէմ իր հօտը պաշտպանել եւ այդ առթիւ նամակներ գրած է, որոնք ան-

ցեր են անուղղակի կերպով մը, Հաւատոյ Տարածման Ժողովին դիւանը: Այս նամակները որոշ ցոյց կուտան թէ մինչեւ իր կեանքին վերջաւորութիւնը Յակոբ Զուղայեցի դեռ կը մնար հաւատարիմ իր հայադաւանութեան: Յակոբ Զուղայեցիի նամակներէն ոմանք պաշտօնական են այսինքն քարթուղարէն գրուած եւ ոմանք ալ իր գրչէն: Դիւանէն անելով հոս կուտամ զանոնք:

Նամակին գլուխը Յակոբ Զուղայեցիի Կաթողիկոսական կնիքը:

«Յ(իսուս) Ք(րիստոս)ի ծառայ Յակոբ Կ(ա)թ(ո)ղ(ի)կ(ո)ս ամ(է)նայն հայոց: Եւ Պատրիարք Վաղարշապատու լուսակառ եւ ք(րիստո)սանկար, Սրովբէաճեմ մեծի աթոռոյն էջմիածնի: Յորմէ ժամանեալ հասցէ դիր ա(ւ)րհնութե(ան) եւ նամակ պահպանութե(ան), շնորհք առաքելական եւ ա(ստու)ծային բաղմապատիկ ա(ւ)րհնութի(ւն) ի վ(ե)ր(այ) տիրապահ եւ Ք(րիստո)սախնամ մայրաքաղաքիդ Թարսիզու, Քահանայիցդ, Տօլթաթաւորացդ, Երեսփոխանացդ, Վաճառականացդ, եւ առհասարակ ամ(է)նայն ժողովրդոցդ, մեծի եւ փոքու, ի Ք(րիստո)ս Ա(ստու)ծ հաւատացելոցդ ամէն:»

«Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութի(ւն) յա(ստուծո)յ հօրէ մերմէ, եւ ի տ(եառ)նէ ամենակալէ յ(իսուս)է ք(րիստոս)է, եւ ի սրբոյ հոգոյն կենարարէ, եւ առատածաւալ պարգեւատուէ, եւ ամենազօր մարդասիրէ եւ բարերարէ, ամէն: Ա(ւ)րհնութի(ւն) հօր՝ պահպանութի(ւն) որդւոյ, նախախնամութի(ւն) ամենասուրբ հոգւոյն միշտ եւ հանապաղ եղիցի ի վ(ե)ր(այ) ձեր, եւ օրստօրէ լցուցէ զձեզ փառօք պատուօք, եւ արգասալիր ճոխութ(եամ)բ իբրեւ զորթս եւ ո(ր)պ(է)ս զօսոս, սաղարթախիտ եւ պտղալից դրախտ անկեալ, ի գնացս հոգւոյն վտակացեալ մնալ ձեզ խաղաղական կենօք ընդ երկայն աւուրս, մինչեւ ի խորին ճերութեանն: Ամէն:»

«Եւ ընդ ա(ստու)ծապատիւ ա(ւ)րհնութե(ան)ս ծանիք, սիրելի որդիք մեր ի տ(է)ր: Զի վ(ա)ս(ն) այդ ա(ստուծո)յ ատելի չԲարսեղդ, որ յաղագս իւր որկրամոլութե(ա)ն եւ պէտնաւութե(ա)ն,